

արքայավայելս⁵⁹։– Քանի՛ մեծ փոփոխություն բաղդի՛ ՚ի սակաւ ամս, եւ խտիր ընդ սպառնալիս Սալահէտտինի (1193) եւ ընդ ընծայատրութիւն Խալիֆային (1197-8), որում պատկառ կայր եւ ինքն սուլտանն գոռ։ Աւելորդ է ասել՝ եթէ ըստ պատշաճի եւ Լեւոն առնէր պատասխանիս եւ փոխարէնս ընծայողացն։

Բայց մեծի ճարտարութեան պէտք էին յիրաւախոհ լինել ընդ կայսեր Բիւզանդիոյ. քանզի Յոյնն խորագէտ՝ ոչ միայն զինքնագլուխ ազատանալն Լեւոնի նկատէր, այլ եւ զիրոյ ինքնակալութեան տկարութիւն եւ զկասկած հարստահարութեան ՚ի Լատինաց, եւ փափագէր ամենայն ջանիւ յինքն յանկուցանել զՀայս. եւ առ յաջողութիւն իրացս՝ բառնալ զկրճիմն մեծ՝ որ ՚ի միջի իւրեանց, այն է զխնդիրս հաւատոյ եւ ծիսից, եւ կատարել զմիաբանութիւնն՝ զոր միանգամ եւ երկիցս փորձեցին նախորդք իւր եւ հայրապետքն Հայոց, Սուրբն Ներսէս Շնորհալի եւ Գրիգոր Տղայ, եւ ոչ էլ ՚ի զլուխ. արդ պատեհ առեալ զթագին ընծայատրութիւն, խոստանայր ղիրել զդժուարինսն, եւ խնդրէր առաքել նուիրակս ուշիմս, զի խօսեցին եւ հաւանեալ կնքեցի դաշն դաւանութեանն։ Որպէս մերժել զընծայեալ թագն՝ հակառակ էր ամենայն հրահանգաց եւ զգոնութեան, նոյն եւ ապախտ առնել զառաջարկութեամբ կայսերն. իսկ տեղի տալ եւ անհակառակ ընդունել՝ յանհնարիցն, քանզի համօրէն ազգային եւ եկեղեցական էր խնդիր։ Ապա խորագէտն Լեւոն խորհուրդ արարեալ եւ քննեալ զզուխս առաջարկութեանցն Յունաց, որ սուղ ինչ պակաս նոյնք էին որ յառաջին նուագսն, կարգեաց եւ ինքն առաջարկս փոխադարձօրէն այնպիսիս, որ ընդ կրօնական կերպարանաւ ունէին եւ քաղաքական զօրութիւն. եւ առ այսպիսի գործառնութիւն մեծ եւ զգոյշ՝ անմարթ էր գտանել զոք պատշաճագոյն քան զամենապատշաճ Լամբրունեցին Ներսէս, մինչ դեռ եւս փայլէր նա եւ յաւելոյր ՚ի զօրութեան ամենայն շնորհացն։ Ապա առաքեցաւ սա (1197) ՚ի Կ. Պօլիս, վասն կրօնական խնդրոց. իսկ վասն քաղաքական փոխանակի հրեշտակութեան եւ շնորհակալութեան՝ յաղագս թագին, տուաւ նմա ընկեր Պարոն *Հաչկաւ*, քեռի Լեւոնի, եղբայր տեառնն Պապեռօն բերդի, որ գուշակի ոչ միայն այր չափահաս լինել՝ այլ եւ զգօն եւ հմուտ յոյն լեզուի. եւ ՚ի սեփական պաշտօնէից Դրան Լեւոնի՝ Պարոն *Պօղոս* ուն։– Արտաքոյ է ղիտման գրոցս՝ մանր քննութիւն այսր խնդրոյ.

⁵⁹ Լը Պոյ, Պատմ. Արեւելեան Կայսերաց. Գ, Ծ։